

## ԱՇՈՒԽ ԳՐԻԳՈՐ ՏԱԼԵԱՆ (ՇԵՐԱՄ)

(ՆՐԱ ԱՇՈՒԽԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԽՆԵՐԵԱՅ, 50-ԱՄԵԱԿԻ ԱՌԴԹՈՎ)

Աշուղը - կեանքը եւ աշուղական գործունէութիւնը - Տպագրւած եւ անտիպ  
երկերի ամբողջական պատկերը - երգերի վերլուծումը - Աշուղի  
դիմանմկարը, նւագը եւ ծայսը - Մամուլի կարծիքը:

### 1. ԱՇՈՒԽԸ

Աշուղ Սայեաթ-Նովա, աշուղ-Շիրին և  
աշուղ-Զիւանի: Աչա Կովկասահայ լաւա-  
զոյն այն աշուղները, որոնք աշուղական  
արեւստի ընագաւառում նշանակալից նւա-  
ճամաներ են արել, ստեղծել են աշուղական  
նոր ուղղութիւն, նոր խօսք ասել և շնոր-  
հիւ իրենց պատմական այդ դերի՝ այսօր  
նրանք աշուղական զրականութեան պատ-  
մութեան մէջ զրաւում են կենարոնական  
տեղ:

Այդ աշուղներից յետոյ պիտի յիշատա-  
կել անպայման մի աշուղի անոնց եւս:

Դա աշուղ Շերամն է, կովկասահայ  
աշուղների վերջին ներկայացուցիչը, որի  
աշուղական գործունէութեան 50-ամեակը  
լրացաւ այս տարի:

50 տարի: Դա հասարակական-կու-  
տուրական գործունէութեան մի մեծ շրր-  
ջան է, ամրոջ կէս զար, որի ընթաց-  
ում Շերամը ծառայել է աշուղական  
արեւստին:

Մական Բնչ դեր է կասարել նա ա-  
շուղական արեւստի ասպարիզում, Բնչ-  
պին նւանութեան է արել և առնասարակ  
Բնչ հասարակական և կուտուրական գոր-  
ծունէութիւն է ունեցել:

Շերամի աշուղական գործունէութիւնը  
կարելի է արձանագրել մի ցանի հիմնա-  
կան գծերով, որոնք բնորոշում են նրա  
աշուղական արեւստի ընագաւառում կա-  
տարած նւանութերը:

Ամենից առաջ նա երաժշտ-աշուղ է:  
Նա ինքն է յօրինել աշուղական եղանակ-

ներ իր հիւսած ոտանաւորների համար և  
տարածել ժողովրդի մէջ:

Մական Բնչ պատմում է կայանում այդ ե-  
րաժշտութեան, եղանակների արժէքը:

Շերամից առաջ և նրա ժամանակ մեր  
աշուղներից շատերը հնչեցրել են աշու-  
ղական հին եղանակներ - զշմա, մոխամ-  
մազ, զիւանի, դեստօի և այլն: Շերամը  
մէկն է այն աշուղներից, որ այդ հին ե-  
ղանակներին: Հակազդում է արեւելեան-  
հայկական ոճով աշուղական թարմ, ինք-  
նուրոյն եղանակներ, նոր երաժշտութիւն:

Այդ երաժշտութիւնը լինելով արեւել-  
եան, ունի իր առանձնայատուկ զծերը և  
ընորոշում է նրա ինքնուրոյնութիւնը:

Դրանցից շատերն այնքան հարազատ  
են արեւելեան երաժշտութեան ոճն (մեծ  
մասամբ հիւսած են պարսկական թաս-  
նիֆների երանգներով), որ նիւթ են ծա-  
ռայել մեր երաժշտագէտների համար: Նոյն  
իսկ Պետերբուրգի (այժմ Լենինգրադ)  
Պետական հնաէրւատօրիայի կօմազդիոր  
Պրօֆ. Քր. կուշնարեանը 1927 թւին թիֆ-  
լիսում, ֆօնօգրաֆով վերցրել է աշուղի  
երգերի 15 եղանակները, իրեւ հայկա-  
կան-արեւելեան երաժշտութեան հարա-  
զատ նմոյշներ, որպէս զի ուսումնասիրէ  
աշուղական երաժշտութեան ոճը:

Աշուղի երկրորդ ժողով առանձնայատ-  
կութիւնը կայանում է նրանում, որ նա  
իսկապէս քանաստեղծ-աշուղ է: Դեռ 17  
տարեկան հասակից նա ծորվդղական լե-  
զուով ու ոճով հիւսել է լիրիքական ան-  
պանոյն երգեր, որոնք իր ժամանակին

զրաւել են նոյնիսկ երածշագէտ կոմիտասի ուղարկութիւնը, և որ զինաւորն է, հետազյում նիւթ են ծառայել մեր երաժշտագէտների համար. Աւ. Ապենդարանան, Ան. Տէր-Դեւոնդեան, կարո Զաքարեան, Դանիէլ Ղազարեան, Վարդգէտ Ժայէան ձայնագրել են այդ երգերից շատերը:

Վերջապէս նշենք աշուղի հասարակական դերը:

Ի՞նչում է կայանում այդ դերը. Այն, որ նա 50 տարի շարունակ Նիկուած իր արևեստին, շրջել է Ալէքսանդրապօլի, Թիֆլիս, Երևան, Ստեփանաւան, Ղարս, Աստրախան, Բագու և այլ քաղաքներ ու կազմակերպել է մի շարք աշուղական համբաներ: Այն, որ 50 տարի հնչեցրել է ժողովրդի մէջ աշուղական թառը և նպաստել աշուղական երածշտութեան զարգացմանը: Այն, որ 50 տարի ժողովրդի մէջ վաս է պահել աշուղական երգը:

Դա ինքնին մի մեծ ծառայութիւն է: Եւ հնչնց այդտեղ էլ կայանում է աշուղի հասարակական դերը:

Սակայն ցաւալի է, որ այս արժէցաւոր աշուղի մասին մինչեւ օրս ցննական-բանափական առանձին ուսումնասիրութիւն լոյս չի տեսել և ոչ էլ նրա անունն է յիշւում հայ գրականութեան պատմութեան մէջ: Լոյել են նրա մասին աշուղական զրականութեամբ զրազող հայ բանակըները: Բայց չի լոյել ուսուական մասուլը «Զարեայ Վոստակա», «Պրոլետարի Մուզիկանեա», «Կրասնահայ Նիւա» արձանագրել են աշուղի կատարած դերը, ընդգծել են նրա նշանակութիւնը:

Այսօր, սակայն, ժամանակն է, որ հայ մամուլը եւս գծագրի վաստակաւոր աշուղի կենացքի, աշուղական գործունէութեան ամբողջական պատկերը և յանձննի բանափական պատմութեանց: Դա անհրաժեշտ է մանաւանդ այսօր, երբ նա կանգնած է իր աշուղական գործունէութեան 50-ամեակի շեմցին:

## Շ. ԱՅՈՒՂԻ ԿԵԱՆՔ

ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Շերամի աշուղական և հասարակական գործունէութեան կենտրոնը եղել է զինաւորապէս Ալէքսանդրապօլը (այժմ Լենինական), ուր ծնվել է նա 1867 թիւն: Այդ միջավայրում էլ նա ստանում էր ուսումնական պետական կրթութիւնը:

Սակայն ի՞նչպիսի հանգամանցներում է նա կազմակերպւում և ձեւակերպւում որպէս աշուղ. ովքեր նրա աշուղական զարգացման գործում դնում են իրենց դրոշմը:

Բնորոշ է այն, որ նրա պապը՝ Քիամիլ աշուղն եղել է իր ժամանակաշրջանի յայտնի աշուղը, իսկ հայրը՝ կարապետ Տալեան 70-ական թւականներին Ալէքսանդրապօլում բանում է մի մեծ և առաջնակարգ սրճատուն (զաւէխսանէ), ուր հրահրում է նւազելու իր ժամանակին յայտնի աշուղներին և երգիչներին: Այդ սրճատուն են գալիս, իրենց խմբերով նւազելու աշուղներ Հաւէսը, Զէհրին, Խոթըզը և գեղ եւս նորեկ ու սինակ Ջիւանն և Զամալյին, որնց իրենց նւազածութեամբ, երգերով աշուղական արևեստի և երաժշտութեան շերմ մժնոլորտ են ստեղծում սրճարանում: Այդտեղ էլ յաճախ տեղի են ունենում աշուղական մրցումներ (մուհամմէ), աշուղների վէճեր, թէնիս, վարսաղի և այլն:

Ոհա այդ միջավայրում է անցնում աշուղ Շերամի պատանեկան շրջանը: Այդ Աշխանում նա ստանում է երածշտական բազմերանգ տպաւորութիւններ և միաժամանակ սաղմանաւորում է նրա մէջ աշուղութեան սէրը:

Սակայն մի հանգամանք յանկարծ շըրջում է Շերամի կեանցի անիւրը. տասը տարեկան հասակում մեռնում է նրա հայրը և փակւում սրճարանը: Այդ օրւանից էլ դառն ու դարդու շրջան է սկսում աշուղի համար. ինչպէս ինքն է յիշատակում մի երգի մէջ.

շայրը մեռաւ, անկիր, անբախտ մնեացայ, շատ ջանացի, զարձեալ մնծ մարդ չդարձայ»:

Աղքատութիւնը, տնտեսական ծանր պայմաններն ստիպում են Երամին մի հրամի մօտ աշակերտ մոնիկ արհեստ սովորելու համար: Սակայն աշուղութեան և երաժշտութեան մէրը նրան հանգիստ չի տալիս և նա իր արհեստը ծառայեցնում

րեն, միերատը և նւազում ու երգեր յօշ ընում, նրանց ըշանում Երամն աւելի է զարգացնում իր երաժշտական ընդունակութիւնը և, որ գլխաւորն է, աւելի է խորանում աշուղական արեստի մէջ:

Ոյնուհետեւ, 1879 թին, 22 տարեկան հասակում, թողնում է հրամութիւնը և վերջնականապէս նէրբում աշուղութեան:



Ցակո (Յակոր Մաթուկեաթ), նւազում է քէմամի փրայ և դէֆ ածող կարօ նէղիկարեամ, մէշտեղիթը աշուղ ցալեամ.— Նկարուած 1895 թիթ Ալբանդրապօլում

է արեստի. իր սեփական ձեռով շինուած է. մի թառ և ինքնաշխատութեամբ նւազել սովորում: Յաճախ ողջ գիշերներ է լուս սացնում. նւազածութեամբ և զնորհիւ իր ընդունակութեան՝ կարճ ժամանակաշրջանում մնծ առաջադիմութիւն է ցոյց տալիս ու, զե. 20-22 տարեկան հասակում, լաւ նւազորի համբաւ է վայելում: Մի՛ հանգամանց աւելի է նպաստում նրա առաջադիմութեանը. Երեկոները նրա խանութիւն են համախմբում. ժամանակի աշուղները՝ Պայմանին, կոյք աշուղ Համ-

նոյն թւին էլ նա կազմում է մի երաժշշտախումբ, որի մէջ հրամիրում է Ղարաբաղցի յայտնի պարսիկ երգիչ Զումշուտին, որի ազդեցութեան տակ յօրինում է պարսկական Բասնիֆների երանգներով մի շարք աշուղական եղանակներ իր հիւսած երգերի համար: Դրանից յետոյ նա իր խմբով հրապարակ է զալիս նւազելու: Այդ օրից էլ սկսում է նրա աշուղական գործունէութիւնը:

Շուտով նրա անունը տարածում է Ալեքսանդրապօլում և հասարակական լայն

շրջաններում յայտնի է դառնում աշուղ Գորոր անունով:

Սակայն Շերամի խսկական գործունեութեան շրջանը և հոչակն սկսում է երբ վերակազմում է իր իրումքը, որի մէջ հրափրում է յայտնի չօնդուռ նւազող թակօխն (Յակոր Մանուկաննին) և դէֆ ածող կարօ Եղիկականնին: Այնուհետեւ Նրան հրափրում են նւազելու ակումբներում, կուլտուրական նպատակով կազմակերպւած հանդէսներում, երեկոյթներում նյոյն իսկ հրաչք է ստանում Ղարսից, Երեւանից, Էջմիածնից և այլ բաղարներից:

Այդ շրջանում, սակայն, նրա աշուղական գործունեութեան կենարննը հանդիսանում է զիմաստապէս Ալէքսանդրապօլի «Քաղաքային ակումբը», ուր կազմակերպւում են ասիական երեկոյթներ: Ահա կուլտուրական այդ ակրում աշուղն իր խմբով 30 տարի շարունակ հնչեցնում է աշուղական թառն ու երգը:

Բնորոշ է այն, որ այդ միջավայրում նա կուլտուրապէս առաջադիմում է զարգանում: Նրա զեղարուեստական և կուլտուրական ձեւակերպման գործում զնում են իրենց դրոշը Ալէքսանդրապօլի կուլտուրական ուժերը: Նա մօտիկ կապեր է պահպանում ուսուցիչ - ուսուցչուհիների հետ: Նոյնպէս ամենասերա կապով կապւում է բանաստեղծները Ա. Խաչակիսանի և Յովհաննէս Յովհաննիսեանի հետ: Ակումբներում երգում է Նրանց ժողովրդական մօտիկ հիւսած երգերը՝ «Դարդս լացէր սարի սմրով» (Խաչակիսանի), «Արազն Էկաւ», «Ախ, աւէք ինձ բաղցը մի քուն» (Յովհ. Յովհաննիսեանի) և մասամյական նացնում: Այդ երգերի ազդեցութեան տակ էլ յօրինում է ժողովրդական մօտիկ ընարական անպաճոյն երգեր, որոնց հետ ծանօթանալով բանաստեղծ Յովհաննիսեանը, խրախուսում է աշուղին: Նոյնպէս յայտնի երաժշտագէտ կոմիտասն Էջմիածնում ծանօթանալով այդ երգերի և եղանակների հետ, գտնում է նրանց մէջ զեղարուեստական - երաժշտական արժէր և անձամբ խրախուսում է աշուղին զրել

ժողովրդական մօտիկով: Շերամի այդ խըլախուսանցներից ոգեւորուած՝ յօրինում է ժողովրդական ոնով մի շարք երգեր - «Ալէք խումար», «Հազար էրնէկս», «Ջաւում ազջիկ», «Բաղը մտայ», «Ճանապարհ ընկաւ թիֆլիս», «Ալիրուններ», մից նեղանայ» և մի շարք ուրիշ երգեր, որոնցից շատերը ձայնագրւած են մեր երաժշտագէտների կողմից:

Այդ երգերը շուտով տարածւում են զաւարից գաւառ, հնչում ժողովրդի շըրթների վրայ ու աւելի ժողովրդականացընում աշուղի անունը իւ նա զանազան ցաղացներից հրաւէք է ստանում կուլտուրական նպատակով կազմակերպւած երեկոյթներին նւազելու համար: Այսպէս՝ 1913 թիւն, Աստրախանում, տառերի զիւտի առթիւ կազմակերպւում են մի մեծ հանդէս, ուր հրաւիրում են նաեւ Շերամին նւազելու համար: Ապա՝ 1914 թիւն բազւայ «Հայոց կուլտուրական միութիւնը», հասարակական ժողովրան, կազմակերպում է մի մեծ ազգագրական երեկոյթ, որին մասնակցում են հայ, ոռու, թուրք, վրացի երաժիշտները, գերասանն - դիրասանուեիները, երգիչները և այլ կուլտուրական ուժերը: Ընկերութեան նախազան բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանը հըրաբրում է Բագու նաեւ Շերամին՝ երեկոյթին նւազելու:

1915 թիւն նա ջղային հիւանդութիւն է ստանում և թժիշկների խորհրդակ տեղափոխում է թիֆլիս, ուր, խորհրդապահումից յետոյ, բացւում է նրա համար մի նոր շրջան:

1922 թիւ Ապրիլի 2-ին, Թիֆլիսում, հայերէն երգ ու նւագ սիրովների մի խումբ Շերամի գործունէութեան 2օ-ամենակի առաջիւ կազմակերպում է մի տօնական երեկոյթ: Չորս տարի անց, 1926 թիւ Մայիսի 8-ին, Լենինականի (Ալէքսանդրապօլ) լուսրաճնի գանիճում ոտնւում է նրա զրական - երաժշտական գործունէութեան 40-ամեակը: Համերգը - երեկոյթին մասնակցում են լենինականի երաժշտական ստուդիայի երգեցիկ խումբը, լարային նւազախումբը,

յայտնի երգիչ Տիգրան Կալբանդեանը,  
աշուղ Խակօն՝ իր խմբով և այլ արևեա-  
տագէտ ուժեր։

Մի տարի անց, 1927 թվին, Աղբյուժանի Լուսողկոմարը Հոկտեմբերեան թերափոխութեան 10-ամեայ յորբինական տօնի առիթով բագւում կազմակերպում է Աղբյուժանի և Հարեւան հանրապետութիւնների առաջին աշուղական համագումարը: Այդ առթիւ դիմում է Հայաստանի Լուսողկոմին և ինդուրում է համագումարին ուղարկել յայտնի աշուղներից մէկին:

Հայաստանի Լուսողկոմը Շերամին է  
ուղարկում թագու համազումարին և այդ  
առթիվ տալիս է նրան հետեւեալ վկա-  
յականը։

Հ. Ա. Խ. Հ.  
ԼՈՒԾԱՊԵԿԱՐԱԿԱՆ ՆԵՐԱՎԱՅՐԱԳՐԻ Հ  
ՎՐԱՅՈՎԱՐՈՒՄ  
12 Նոյեմբ. 1927  
№ 483

ՎԵՐԱՅԻՆ

Տրւում է սոյնը ժողվրդական երգիս  
աշուղ Գր. Տալեանին, հայ աշուղների վեր-  
ջն ներկայացուցչն առ այն, որ գործող-  
ւում է Խորիր. Հայաստանի Լուսժողկո-  
մատի կողմէց Ալբրեքչանի աշուղների ա-  
ռաջն համագումարին, համաձայն Խորի-  
Ալբրեքչանի Լուսժողկոմի Խրաւէրին:

Հ. Ս. Խ. Տ.  
Ղուստողկոմատի Թերկայացուցիչ  
Վրաստանում  
ՍՈՒՐԻԱՑԵԱՆ

1929 թ.ի Ապրիլի 3-ին Թիֆլիսի Պետական ակադեմիկ օպէրային թատրոնում տեղի է ունենում Անդրկովկասան ժողովրդական երգերի երեկոն, որին մասնակցում են հայ, թուրք և վրացի արևետագէտները — Ազրբէջանի աշուղ Սաղգըշյայտնի քէմանչիստ Լեռն կարախանը, երգիչ Մամիթը, ժողովրդական երգերի

կատարող Վահան Տիգր-Առացելեանը, Այդ  
երեկոյի համար յատկապէս հրաւիրում  
են նաև Գորիսայից և Լախչիբայից ժո-  
ղովրդական երգեցիկ խմբեր։ Անա այդ  
երեկոյ հանդէս է զալիս և աշուղ Ենթամբ  
և թառի նւազածութեամբ երգամ իր սե-  
փական ստեղծագործութիւններից մի քանի  
կտոր, որոնց ջիրմ ընդունելութիւնն  
են գտնում հասարակութեան կողմից։

Այս Հերամը 73 տարեկան է: Ապրում է Թիֆլիսում (Պուշկինեան փողոցի թիւ 18 տանը) և անդամ է Ռաապիոնի Գեղարվեստի Աշխատաւորների Միութեան:

### **3. ԱՀՈՒԴ ՏԱԼԵԱՆԻ ՑՊԱԳՐԻԱՆ ԵՒ**

Ծերամն իր աշուղական հօ-ամեայ գոր-  
ծունէութեան ընթացքում յօրինէլ է 300ից  
աւելի երգեր, որոնց իրենց բովանդակու-  
թեամբ շօշափում են հասարակական-սա-  
ցիալական տարրեր ինդիբներ և որ կա-  
րենորն է կնկրէտ զաղափար են տալիս  
աշուղական հայեացների և մոռուուների մա-  
սին. Այդ երգերն աշուղափաւ են զեց ա-  
ռանձին աւանդների մէջ, որոնց աժմ գրտ-  
նուում են կան մօտ: Դրանցից մէկը պա-  
րուէ է, իսկ մինչզ տպագրւած են առանձին  
զբարով, որոնց պատճենը ժամանակա-  
գրական կարող հետեւալն է:

1. «Քենար» — 74 էջից բաղկացած  
մի բրոշիք է դա: Տպագրուած է Ալեքսան-  
դրապօլիս 1900 թ.ին, որի Կանոն է կողքի  
ճակատին գրւած է Երգի Գրիգոր Տայախան:  
Պարունակում է երգ, որոնց մեծ մասը  
սիրային են. Կան նաև հանելուկներ, դա-  
րիկական, հարսանելիան և պատմական  
եռեռեռ.

2. «Գանգստի շաբրեր»։ — Այս անւան առկ տպագրած էն նրա յեղափոխական երգերը 1905-6 թվականներում։

3. «Արև և Կոյսի». — Դա 112 էջից  
բաղկացած մի գրքոյ է: Տպագրել է 1907  
թ. ին Աւետիսանդրապոլում Գրիգոր Տպագրեց  
ստորագրութեամբ, Յակով Ղասապեանցի:

տպարանում, Երգերը, թւով 96, իրենց րավանդակութեամբ սիրային են, ազգային, խրատական. կան նաև ձօներգներ, պարերգներ, ընդդիմախօսութիւն, ողբեր, յետափոխական-ռազմական և բանորական ուսանաւորներ: Գրցի շապկի վրայ տպազգրւած է.

«Գնա՞ բըրուլ, Թոփի գնա,  
Այս արիւոտ աշխարհն.  
Թոփի բըրուլ, Է մի հենայ,  
Բաժմանեցին քեզ վարդէն»:

4. «Անընդ պարտէզ». — Լոյս է տեսել 1913 թւին Ալէրսանդրապօլում «Երակ» տպարանում: Բաղկացած է 94 էջից և պարունակում է 87 երգ, որոնց մեծ մասը ժողովրդական ոճով հիմուած բնարական երգեր են: Շապկի վրայ տպազգրւած է.

«Վարդ ցանեցի  
Դարս քաղեցի.  
Եար ցնուեցի,  
Եարա ցուայ».

5. «Անզուակ արչուս». — 32 էջից բաղկացած մի գրքոյ է. պարունակում է 26 երգ. զրանց համաշխարհային զարիւորելի պատերազմի և Վիլհելմ կայսրի դէմ ուղածած բողոքի շեշտեր են, կան նաև ռազմի կոչեր: Գրքով տպազրւած է 1915 թւին Ալէրսանդրապօլում «Երակ» տպարանում: Շապկի վրայ գրւած է այս բառեակը.

«Այս սոսկալի երկունքը  
Պէսք է ծնի մեզ նոր կեանք.  
Տնչալի վառ ապազան  
Պահանջում է մեզ փրկանք»:

6. «Երգեր». — 66 անտիպ երգեր են դրանք, որոնց ամփոփւած են լաթակազմ, սրճարդյն կողըով և քառակուսի գծերով մի հասա զաթարի մէջ, որ գրւած է 1900-1918 թ. Լենինականում և Թիֆլիսում: Դաւթարի սկզբում գրւած է աշուղի կարճ կենազրութիւնը և երգերի վերլուծութիւնը՝ «Ժողովրդական երգիւ-աշուղ Գրիգոր Տայեան (Երամ)» վերնազրով, իսկ առաջարանի փոխարէն գրւած են աշուղի չորս

երգերը, — «Մուսայիս», «Էս էլ իմ բարը», «Ո՞նկնել եմ ուզում» և «Աշուղին»: Այսուշեաւ զալիս են սիրային երգերը, թւով 62, իւրացանչիւր երգի տակ նշանակւած է, թէ ո՞ր թւին է գրւած: Երգերը գրւած են աշուղի որդու՝ Վազգէն Տալեհանի մեռցով: Այժմ զաւթարը գտնւում է աշուղի մօտ.

#### 4. ԱՅՆԻ ՏԱԼԵԱՆԻ ԵՐԳԵՐԸ

Ի՞նչ է երգել Երամը 50 տարւայ ընտացյում, հասարակական-ոսցիալական ի՞նչ խնդիրներ է շօշափել և քննադատել, ի՞նչ աշխարհայեացը է ունեցել, ի՞նչպիսի հիմնական, հրատապ հարցեր է հրապարակի վրայ դրել և առհասարակ ժամանակաշրջանի ի՞նչ երեւոյթներն է վըրձինել:

Այս կարեւոր հարցերը պարզելու համար վերլուծենց աշուղի երգերին, որոնց իրենց բովանդակութեամբ և հրատածով բաժանում են 4 սէրիայի: ա) Լիրիքական, բ) Խրատական-բարոյական, գ) Ցեղափոխական և դ) Խառն մօտիւներ:

ա) Լիրիքական երգեր: Ազուղ Երամի ստեղծագործութիւնները մեծ մասը վերիցական-ցնարական երգեր են, որոնց մեծ մասը պարզ, անպանոյն, բայց աշուղական երանգներով հիւսւած գողորիկ ուսանուններ:

Այդ երգերի մէջ աշուղը գերազանցօրէն լիրիկ-երգի է: Երբեւ այդպիսին երգել է նաև իր ներցին աշխարհը, իր հոգեկան տրամադրութիւնները, երգել է իր խոհերը, զգացումները, վիշտը, երգել է իր սէրնու սիրունին:

Ճիշտ է այդ երգերը հասարակական տեսակտից առանձին մի արժէց չեն ներկայացնում, բայց հիւսացրը պական են աշուղի սիրոյ պատմութեան հետ ծանօթանալու համար, իր սիրոյ ապրումները, յոյզերը, տանջանցները նա տարբեր գոյշներով և երանցներով պատմում է մի շարք լիրիցական երգերով: Առանձնապէս նա գոյն չի խնայում իր եարին նկարելիս, նրա գեղեցկութիւնը դրւատելիս: Այդ նը-

կարները վրձննելիս աշուղն իր գոյները  
վերցնում է զլիաւորապէս բնութիւնից:  
Նրա եարը «նոր ծլած մի ծառ» է, «ոսկէ  
մազերով» և «շարմազ—լուսնեակ եր-  
սով», որը անուշ քննել է ծաղիկների և  
վարդերի ծոցում.

Օնոր ծլած ծառ ես,  
խաս վարդի խառ ես.

Անուշիկ, սիրուն  
Մէկ անմեջ գտու ես:

Ոսկէ մազ ունիս,  
Զեռփրդ սահ ունիս.  
Ամէն մէկ խօսփրդ  
Հազար նազ ունիս:

Բուխախոդ է կլոր,  
Աչքերդ բիլոր.  
Երնադ շարմազ,  
Լուսնեակ է թալոր:

Ցոլուն գոնար ես,  
Նոր հասած բար ես.  
Սիրուն, գէրգերիս  
Մահլամ էս, ճար էս:

Լանջդ ճերմակ բաց,  
Մաղոցն ես քնած.  
Վարդերի ծոցում  
Փուել ես հարբած:

Էրնէկ էն սարին  
Բարձր կատարին,  
Որ չի պապակոմ  
Ինձ նման եարին:»

(անտիպ)

Այս երգից երեւում է, որ աշուղի եարն  
աննման մի գեղեցկուհի է. և նա հմայւած  
Նրա գեղեցկութեամբ, արեւելեան վաս,  
գունեց համեմատութիւններով նկարում է. առանձին հաճոյցով է զծագում նա իր  
եարի զէմբըց, Տեսնել էր աշբերի տեղ ասա-  
դիկներ, չըթների տեղ ծաղիկներ, լուսին  
հակատ: Ահա այդպիսի աննման մի սի-  
րուն է աշուղի եարը, որի չընազ զէմբըց  
սրանչացած՝ երգում է.

Ո՞վ է տեսէլ նոճի ծառին նուռ բասած,  
Տերեւներում չքնար լուսնիկ պատրուսած.  
Ո՞վ է տեսէլ աչքերի տեղ աստղիկներ,  
Ո՞վ է զծել չըթունքի տեղ ծաղիկներ:

ԲԱՑՄ. ՅՈՒՆԻՍ-ՕԴՈՍՈՍ 1980

Են լուսնիկը սիրուն եարիս նակատն է,  
Են չիսարին իմ թալանիս հասակն է...  
Են զոյգ նուռը կաթնաղբեր են կենսական,  
Վաս աստղիկներ լցոն են շողում հոգեկան:

(«Անչորդ պարտէզ» Էջ 59)

Կամ՝

Վագերդ հորիզոն, մարմինդ երկինք,  
Կոկորդ գիւթական սիրաբուխ սրին.  
Երանց երկային առեւ լուսառը,  
Կուրծքը լոյս աշխարհ է, գիրկդ մեղրածոր:

(անտիպ)

Ալշուղն այնցան է հմայւում եարի գե-  
ղեցկութեամբ, որ նրա նմանը չի գտնում  
արար աշխարհում: Չի էլ կարողանում  
որոշել, թէ էդ սիրունը «արճզ» է, «զե-  
փիւռ», թէ «ցերեկ»: Տեսէց, ինչպիսի  
դիւթական ուժ ունի աշուղի «անուշ  
եարը»:

«Թէ որ աշխարհ արեւ չունի՞  
Խնդրէ եարիս վեր բարձրանայ.  
Թէ որ աշխարհ ցերեկ չունի՞  
Խնդրէ եարիս կուրծքը բանայ:

Թէ որ երկիր հովեր չունի՞  
Խնդրէ եարիս մազեր բանայ.  
Թէ որ երկիր աստղեր չունի՞  
Խնդրէ եարիս աչքեր բանայ:

Անոնց եարս և արեւ է  
Եթ զեփիւռ է ինձ համար.  
Ես զիշեր եմ – նա ցերեկ է,  
Կենաց բաց գուռ է ինձ համար:

(անտիպ)

Ահա այսպիսի գունեղ և պատկերաւոր  
համեմատութիւններով է նկարում աշուղն  
իր եարին: Եւ այդպիսի գեղեցկեկ եարի  
սիրով կրակուած՝ իշնում է պարտէզ,  
ծաղիկներ փնջում և զնում նրա տան  
դրան շեմբին պառկում, որպէս զի երր  
«Նազելին» դուրս գայ, գոնէ մի անգամ  
կուրծքը փարի նրա ստերին: Սակայն  
հասկանում է եարի աշուղի հոգեկան դը-  
րութիւնը, զիմաւորում է նա աշուղին  
ժափիներով և ծաղիկներով: Ահա նա –  
պարտէզում, ծառի տակ, կարմիր վար-  
դերի ու ծաղիկների մէջ, անուշ հովին

22

բուն է մաել, նա թողել է աշուղին «սիրոյ դարտով».

«Ժարի տակը, անուշ հովին  
նարս պառկել է մէջ ոսկին.  
Նա քնած է հանդարտ սրտով.  
ինձ թողել է սիրոյ դարտով:

Ալարդերը վերմակ է արել,  
փնտուշ մարմին է փաթաթել.  
Կլոր ու ճերմակ թեւերը  
Ծածկել են սեւ թաւ մազերը.

Արեգակը գուրս է եկել:  
Նարին ճակատին է հասել.  
Դեռ չի զարթնում անուշ քնէն,  
նարալի եմ սեւ աշերէն»

(«Սկր և կոհ» էջ 17)

Այդ աշերը շղթայում են աշուղի հո-  
գին ու սիրուշ և նա զդիմանալով սիրոյ  
ցափին, զրկում է սազը և եարի մօտ զը-  
նում, որպէս զի պատմի իր անկեզծ սէրբ:  
Եւ ահա տարրեր մօտիներով պատկերա-  
ցնում է նա իր սէրբ, հոգիկան ապրում-  
ները, իր տանջանցները, իր «եարալու  
ջնկեարը».

«Սազը դօշիս եմ գրել,  
Սէրդ սրտիս է տիրել.  
Քիրուշ աղջիկ, ալւան ծազիկ, իմ հանիկ,  
Անուշ աղջիկ քո սիրուց  
Բնին աշըզ եմ դառել,  
Քնուց աղջիկ, ալւան ծաղիկ, իմ հանիկ»

(«Սկր և կոհ» էջ 33)

Նամակ է գրում եարին և պատմում  
ամենայն պարզութեամբ իր վշտոտ «եա-  
րալու» սրտի փոթորիկները.

«Ոիրում եմ քեզ՝ խապար չունիս,  
Խորովել ես ջիկեարս.  
Դու հէշ սիրոյ ու ջիկեար չունիս,  
Փունչ-դիուչ ծազկած չխարս:

Կուժք ուսիդ ազբիւր կ'երթաս,  
Շաղկու դաշտի վրայով.  
Առ քեզ հետ տար իմ ոսկեթաս,  
Ջուր էլ ինձ բեր քո ձեռքով:

Կամ թէ մէկ հու դարձի տեսնիմ,  
Ալծուի հանդուն աշերը,  
Մուրազիս էլ որ չը հասնիմ,  
Հեռուից խեմ պատկերուտ:  
Ամեն զիշեր ուժաւ եմ զնում,  
Լի պարզ անուշ աղբրին,  
Որտեղից միշտ ջուր ես խմում  
Այս խառնմ էն ջրին»

(«Անջուր պարտէզ» էջ 76)

#### Կամ՝

Աքս երեսդ մաց,  
Խելքս զիլիցս զնաց.  
Հէշ խիզճ չունի՞ քո սիրուը,  
Սիրուս եարալու մաց:

Սակայն եարն անտարբեր է մաում և  
աշուղին թողնում սիրոյ տանջանցների  
մէջ, իսկ ինը միշտ հանդերում, լուս-  
նեակի տակ, վարդերի ու ծաղիկների մէջ.

«Ալսնեակի տակ, հանդերի մէջ  
Զէյրանն է քնած.  
Հովերի հնատ, վարդերի մէջ  
Անուշ քրտնած:

Աշուղն զգում է, որ իր եարի պատ-  
ճառով ուրախ սիրոն արինուտած է, հո-  
գին խոցած: Եւ ահա սիրոյ երգերին յա-  
ջորդում են սիրոյ տրանուններ: Նա այլ  
եւս զդիմանալով սիրոյ տանջանցին, զար-  
կում է լարերին և վշտոտ խագերով և  
զանոնթեամբ երգում է «սար դարտերը».

«Հէյ, ծով եմ շինել շահան աչքերս,  
Մարդ չի հասկանում իմ սար դարտերս...  
Նախշուն հաւքերը թռան էն սարէն.  
Զըտին խապար իմ ջան-ջիկեարէն...  
Թուան, հեռացան, թողին շարած,  
Լուսնեակս խաւար, ասուս մոլորած...»

(«Անջուր պարտէզ» էջ 79)

Սիրոյ ցաւից աշուղը ծանր հիւանդա-  
նում է. հոգիկան այդ զրութեան մէջ նա  
զիմում է եարին և խնդրում գոնէ երա-  
զով զալ, որպէս զի իր կարօտն առնի:

«Մէկ սիրո էրաւ, հէյ անշիկեար.  
Արի, մեր տուն ներս մտի,  
Ես հիւանդ եմ, եար քո դարտով,  
Էդ քո սիրով նար զտի:

Վարդ ցանեցի,  
Դարդ քաղեցի.  
Եար փնտացի  
Եարա գույ:

Ազգս մաց եար գու ճամբէդ,  
Հէջ չէ, արի երազով.  
Մէկ էլ տեսնիմ շրպեա բօյդ,  
Զինիմ մտոնիմ մուրազով:

Տարիներս զլոր-մլոր,  
Ան շոււ անցան գնացին.  
Իմ սաւտալու սրտիս բոլոր,  
Գու գարուերդ մնացին:

(«Անչոր պարտէց» էջ 43)

Սակայն եարն անտարբեր նստած «քարկահ» է բանում և ամէն անզամ անուն «աշելիս» մարդու խելցն է անոնմ: Աշշուղը գծազրում է եարի աշխատանքի մօմէնտն այնցան պարզութեամբ և մանրամանութիններով, որ կարելի է նկարել:

«Մատը անզին մատանի,  
Նստէլ քարկահ կ'բանի.  
Ամէն մի վեր աշելիս  
Մարդու խելըը կ'սանի:

Աչքերով, այտերով, ուներով մալում աղջիկ, խանձեցիր, խորվեցիր քո սիրով զալում աղջիկ:»

(«Անչոր պարտէց» էջ 17)

Եւ վշտարեկ աշուղը չղիմանալով սիրոյ հարւածներին, առնում է ցոււղը և զնում օտար աշխարհ, որ «եարալու սիրտը» ամորի: Եւ նա երգում է իր հրաժատի երգը:

«Ճամբորդ եմ ջանիդ գուրապան,  
Կաց բարով ջան սիրական.  
Սիրտս քեզ մօտ կ'թողնիմ,  
Զնոնի մնաս անզիւման:

Ճամամ լանջէդ, շաւադ լանջէդ,  
Մէկ-մէկ համբուր հալաւ էրա.  
Հալալ էրա - հալալ էրա:

Աղուր բխաց ժեռ քարէն,  
Մարան իջաւ սէգ սարէն.  
Ուրիշէն ումուս շունիմ,  
Մինակ գու ես իմ շարէն:

(«Անչոր պարտէց» էջ 81)

Մինչեւ 70 տարեկան հասակը չի հասնում աշուղն իր անուշ եարին: Անունեալու նա անյոյս, անմխիթար՝ թախծոտ շեշտեր և յուսահատ հառաշանցներ է գնում իր երգերի մէջ, զանգաւում է «զալում» եարից և անիծում իր հանդիպումը միշտ կովկասահայ աշուղը չի երգել իր չօնզուոփ կամ թափ հետ, նրա այնցան ժողովրդականացած «Գանզատ» երգը.

«Որտեղից ինձ պատահեցիր,  
Հանգիստ քուն խանցարեցիր.  
Սիրտս ինչ շանթեր խրեցիր,  
Զալում աղջիկ, զուլում աղջիկ,  
Ինձ շինեցիր թօնած ծաղիկ:

Սիրտս սրտիդ հետ կապեցիր,  
Քանի անզամ ինձ խարեցիր,  
Առանց կրակ տապակեցիր:

Որտեղ էկար, գու ինձ զատր,  
Որ տանջում էս, հէյ, շարաչար,  
Հոզիս արիր քեզ սիրահար:

Սիրող սիրտը ամէն մէկ բան  
Զոհած, կ'երթա մինչ գերեզման,  
Նորան չկայ դատ, դատաստան:

Զալում աղջիկ ով քեզ ծնեց,  
Վաս սէրդ իմ հոզիս հանեց,  
Առանց գաշուն ինձ սպաննեց:

(անտիպ)

(շարութակնելի) Արար Երեսնան